Մայիսը YIC-ի հետ

2013 # 4

ԵԿԾ Հյուրընկալություն

Բրեմենյան երաժիշտները Գյումրիում

Շատ տարիներ առաջ, Արագած լեռան ստվերում կար մի գյուղ, որտեղ ապրում էին 11 հայ երեխա: Բայց, իհարկե, նրանք բնավ պատահական երեխաներ չէին, ո՛չ: Այս երեխաները Գյումրու թիվ 25 գերմանական դպրոցի աշակերտներ էին: Եվ եթե թույլ տաք, կասեմ, որ հիանալի գերմանախոսներ էին:

Այս 11 երեխաները գերմանացի կամավորներ Յոհաննայի և Աննայի հետ ունեին գերմաներեն ներկայացում բեմադրելու մի միտք: Ներկայացում բեմադրելու որոշումը արագ կայացվեց, և ահա, մարտի սկզբից սկսած և՛ երեխաները, և՛ կամավորները լիովին կենտրոնացած էին բեմադրելու «Բրեմենյան երաժիշտներ» հեքիաթի հիման վրա ներկայացում:

Եթե դուք անցնեիք թիվ 25 գերմանական դպրոցով նախորդ 3 ամիսների ընթացքում երեքշաբթի կամ հինգշաբթի օրերին, ապա լիովին հնարավոր կլիներ լսել, թե ինչպես են երեխաները դերերը փորձելու ընթացքում քննարկում դեկորացիան ու հագուստի ձևավորումը, սովորում գերմաներեն սցենարն ու կենդանիների ձայներ նմանակում:

Մի քանի շաբաթ նախապատրաստվելուց հետո, եկավ սպասված օրը՝ մայիսի 24-ը: Վաղ առավոտից երեխաները սկսեցին փորձել և նախապատրաստվել ներկայացմանը: Ավելի ուշ սկսեցին ժամանել ներկայացման մասնակիցների ընկերներն, ուսուցիչներն և ընտանիքի անդամներ: Ներկայացումը սկիզբն ազդարարվեց. . .

Ինձ համար այս դպրոցահասակ երեխաների հետ աշխատելն ու ներկայացում բեմադրելը իրոք հրաշալի փորձ էր:

ԵԿԾ կամավոր Աննա Սկոթ

Առաջիկա ամսվա ակումբները

Երկուշաբթի.

15:00 – Անգլերենի ակումբ/ սկսնակների համար
(Սյուզաննա Սահակյան)

Չորեքշաբթի.

15:00 – Գերմաներենի մշակութային ակումբ
(Աննա Շոթ)

Հինգշաբթի.

17:00 – Անգլերենի ակումբ/ սկսնակների համար
(Սյուզաննա Սահակյան)
(Syuzanna Sahakyan)

Մանրամասների համար:
https://www.facebook.com/www.yic.am

Գունավորիր քաղաքը

Մեզ՝ կամավորներիս, տեղացիները հաճախ տալիս են նույն հարցը՝ «Ձեզ դուր գալիս է Գյումրին»: Երկար մտածում ես, թե ինչ պատասխանել և տալիս ես նմանատիպ պատասխան՝ «Սա գեղեցիկ քաղաք է, բայց մի քիչ մոխրագույն» կամ «Գույներ են պակասում այս քաղաքից»: Եվ իսկապես, Գյումրու ճարտարապետությունը շատ գեղեցիկ է և հին, իսկ պատմական տները միշտ հիացնում են ինձ, երբ քայլում եմ քաղաքի փողոցներով: Երևանը չունի այսպիսի հնություն և այդ է պատճառը, որ այն յուրահատուկ է: Բայց այս ամենի հետ մեկտեղ, քաղաքը միևնույն է դեռ մոխրագույն է:

Մենք՝ ԵԿԾ կամավորներս, մտածում ենք, թե ինչ կարելի է անել: Մենք ի վիճակի չէինք գունավորելու տները, բայց գունավորել մեկ այլ բան մտածում էինք, որ կարող ենք:

Առաջին գաղափարն էր ներկել փողոցի լամպերի սյուները, բայց պարզվեց, որ մատակարարման տեսանկյունից շատ դժվար կլիներ: Ավելի ուշ, Վիկտորիան առաջարկեց մեկ այլ գաղափար՝ «Ձմռանը մենք գործում ենք շարֆեր, գուլպաներ և գլխարկներ….իսկ ինչու չենք կարող գործել նաև ամռանը՝ ծառերը փաթաթելու համար, որով և կդարձնենք Գյումրու փողոցները ավելի գունավոր»: Այո, իսկ ինչու ոչ: «Քաղաքային գործվածքը» դա փողոցային արվեստի մի տեսակ է, որևը ծագել է Միացյալ Նահանգներում և տարածում գտել Եվրոպայում և արևելյան երկրներում:

Մենք սկսեցինք գործընկերներ փնտրել, ովքեր կմիանային մեզ և կաջակցեին մեր ծրագրին, քանի որ ուզում էինք, որ տեղացիները ներգրավված լինեին, և աշխատելով միասին ցույց տալ, թե ինչքան հեշտ է միասին ինչ-որ բան անել և փոխել քաղաքը: Մեր լավագույն գործընկերը դարձավ Հայկական Կարիտասը: Սկսեցինք աշխատել 58 թաղամասում գտնվող «Փոքրիկ Իշխան» երեխաների խնամքի կենտրոնի հետ, քանի որ նրանք ունեին ձեռքի աշխատանքի դասընթացներ, որոնց շատ երեխաներ են հաճախում և հենց այդ երեխաները անվերջ գործում էին մեր ծրագրի համար:

Ամեն շաբաթ սկսեցինք գնալ «Փոքրիկ Իշխան» պատրաստելու ծառերի համար գործվածքներ:

Հունիսի մեկին ցնծություն էր տիրում, երբ մենք սկսեցինք անցկացնել գործվածքները ծառերին: Ոչ ոք չգիտեր, թե մենք կունենանք բավականին շատ գործված կտորներ և թե ինչպես կընդունեն տեղացիները մեր նախաձեռնությունը, թե ինչքան երկար կման ծառերին ամրացված գործվածքները:

Միջոցառման օրը Վիկտորիան և ես գնացինք Սայաթ-Նովա փողոց, որտեղ ծառերին պետք է փաթաթեինք գունավոր գործվածքները: Այնտեղ ոչ ոք չկար: Բայց հանկարծ «Փոքրիկ Իշխանի» երեխաները հայտնվեցին և ԵՆԿ ՀԿ անդամների հետ միասին սկսեցին գործվածքները փաթաթել ծառերի շուրջ: Այս գործընթացը մի քիչ քաոսային էր թվում, բայց վերջնական արդյունքում մենք ունեցանք գեղեցիկ և գունավոր փողոց: Հետաքրքիր էր փողոցով անցնող քաղաքացիների մոտեցումները: Վերջիններս ոգևորում էին նախաձեռնությունը:

Շնորհակալություն այն բոլոր մարդկանց, ովքեր միացան մեր ծրագրին և օգնեցին կյանքի կոչել մեր ծրագիրը:

Մեր նպատակին մենք հասանք՝ գունավորեցինք քաղաքը:

ԵԿԾ կամավոր Նելլե Թաստ

Միջազգային դասընթաց Էստոնիայում

Էստոնական « Loesje » ՀԿ-ն կրկին ուրախությամբ ողջունեց երիտասարդների եվրոպական տարբեր երկրներից հաղորդակցության արդյունավետ մեթոդների վերաբերյալ նոր ուսուցողական դասընթացի շրջանակներում: Այս անգամ դասընթացն իրականացավ Պեյպսի լճի ափին գտվող գեղեցիկ գյուղում:

Դասընթացի համար քսան մասնակից էր հավաքվել Հայաստանից, Վրաստանից, Մոլդովայից, Ուկրաինայից, Բելոռուսիայից, Սլովենիայից, Լատվիայից, Էստոնայից և Ավստրիայից:

Ծրագրի նպատակն էր կիսել գիտելիքներ և փորձ հաղորդակցության մեթոդների վերաբերյալ, ինչպես նաև այն մասին, թե ինչպես օգտագործել սոցիալական և տպագիր լրատվամիջոցները՝ որպես քարոզչական գործիքներ սեփական ծրագրի կամ կազմակերպության արդյունավետությունը բարձրացնելու համար:

- Ի սկզբանե այս ծրագրին մասնակցելու նպատակն էր ձեռք բերել գիտելիք և փորձը ինչպես տպագիր, այնպես և սոցիալական լրատվամիջոցների ոլորտում, զարգացնելու հաղորդակցության հմտություններ, որոնք հետագայում կկիրառեմ Գյումրի վերադառնալիս: Ես նաև ուզում էի հասկանալ, թե ինչպես են այլ ՀԿ-ները օգտագործում սոցիալական և տպագիր լրատվամիջոցները որպես իրենց հաղորդակցության մարտավարության մաս:

Դասընթացը ներառում էր քննարկումներ հետևյալ թեմանրով՝

- ՀԿ-ների և հատուկ ծրագրերի ընդհանուր խնդիրների հետազոտություն

-Հատուկ ծրագրերի կամ կազմակերպությունների մեջ տպագիր և սոցիալական լրատվամիջոցների օգտագործմանը վերաբերող լավագույն փորձերի փոխանակում

-Ստույգ լրատվական գործիքների մասին իմացություն

-Ապագա համագործակցության համար ծրագրերի նախագծում:

Ծրագիրն ուներ իր սեփական բլոգը, և մասնակիցները նկարներով և պատմություններով թարմացնում էին այն ամեն օր:

Մասնակիցները նաև պնդեցին ունենալ իրենց սեփական փորձի փոխանակման հնարավորությունը Loesje NGO-ի մասին ավելի շատ բան բացահայտելու համար՝ կազմակերպության պատմությունը և թե ինչպես է այն աշխատում:

Դասընթացի ավարտին ծրագրի մասնակիցները դասավանդողների հետ միասին քննարկեցին Youth Pass-ի մրցունակությունը, և մասնակիցները լրացրեցին ձևաթուղթ՝ ձեռք բերած գիտելիքներն ու փորձը արտացոլելու համար:

Դասընթացի վերջին օրը մեզ հնրավորություն տվեցին լինելու Տարտու քաղաքում, որտեղ մենք այցելեցինք տպագրական և թղթի թանգարաններ: Տպագրական թանգարանում մենք հնարավորություն ունեցանք գործնականում մասնակցել տպագրության գործընթացին: Թղթի թանգարանում մենք մասնակցեցինք թղթի օգտագոծման որոշ ցուցադրությունների, որտեղ սովորեցինք՝ ինչպես ստեղծել ծրարներ և գլխարկներ, նաև թղթի ծալման մի քանի պարզ տեխնիկա, որպեսզի ավելի ուշ մենք կարողանայինք պատրաստել որևէ պատկեր:

Դասընթացի մասնակից Գագիկ Գրիգորյան

«Ցավոք մեր երիտասարդական դաշտը ներ-

Հարցազրույց Լիտվայում տեղի ունեցած «Երիտասարդական պետականքաղաքա-

Ինչպե՞ս ստացվեց,որ մասնակցեցիք ծրագրին :

Ծրագրի մասնակցության հրավերք ստացել եմ YIC-ի գործընկերներ/ընկերներիցս՝ Արթուրի և Նելլի կողմից, ում իրենց հերթին Հայաստանի երիտասարդական դաշտում ներգրավված փորձագիտական հմտություններ ունեցող թեկնածու գտնելու հարցով դիմել էին իրենց գործընկերներ/ընկերներ Մարիուս Ուլոզասը և Ներիուս Միգինիսը Լիտվական «Քաղաքական վերլուծությունների և հետազոտությունների ինստիտուտ» կազմակերպությունից: Ծրագրային ձևաչափով նախատեսված էր ԵՄ Արևելյան գործընկերության և Սև ծովյան տարածաշրջանի ռեգիոններից 13 պետությունների ներկայացուցիչների մասնակցություն, յուրաքանչյուր երկրից 3ական ներկայացուցիչներով՝ մեկը ներկայացուցիչ երիտասարդական հիմնախնդիրներով ուղղակիորեն զբաղվող նախարարություններից, մեկը ազգային երիտասարդական խորհուրդներից և մեկ ներկայացուցիչ երիտասարդական մարզային կազմակերպություններից:

Ցավոք մեր երիտասարդական դաշտը ներկայացնելու պատիվը հասավ միայն ինձ... կազմակերպիչների խոսքերով Հայաստանի Երիտասարդության Ազգային Խորհուրդի հետ կապվել իրենց այդպես էլ չի հաջողվել, ինչն այնքան էլ զարմանալի չէ, թեկուզ հաշվի առնելով իրենց պաշտոնական կայքի թարմացումների ժամանակագրությունը (www.nyca.am խմբագրի կողմից), իսկ Սպորտի և Երիտասարդության նախարարության ներկայացուցիչի չմասնակցման պատճառների մասին տեղեկություն չունեմ... չնայած որ ծրագիրը իրականանում էր Երիտասարդությունը Շարժան Մեջ ծրագրի շրջանակում և մասնակիցների կեցության ամբողջ, և տեղափոխման

ծախսերի 70% ապահովում էր կազմակերպիչների կողմից... Չէի ուզենա մասնակցության հարցը ներկայացնել պատմական նշանակություն ունեցող հարցերի տեսանկյունից, սակայն միայն այն հանգամանքները որ այս հանդիպման կենտրոնում «տեղեկական/ՏԻՄ ձևաչափում երիտասարդական քաղաքականություն» թեմատիկան էր, ծրագիրը իրականանում էր Լիտվայի հանրապետությունում և նախատեսված էր հանդիպումներ երիտ սեկտորի հիմնական պատասխանատուների հետ, իսկ Լիտվան այս տարի դառնալու է ԵՄ նախագահող պետություն և անցկացնելու է մեծածավալ աշխատանքներ նույն Արևելյան գործընկերության «երիտասարդական պատուհանում»... նաև այն որ Երիտասարդական քաղաքականության Լիտվական մոդելն այսօր համարվում է ԵՄ տարածքի օրինակելի լուծումներից մեկը երիտասարդական հիմնախնդիրների լուծման պետական մոտեցումներում.

Ո՞րն էր ծրագրի թեման և նպատակը :

Դասընթացը համախմբել էր 13 գործընկերների Եվրամիության արևելյան գործընկերության /ԵԱԳ/ և Սևծովյան տարածաշրջաններից՝ Բելարուս, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Ռումինիա, Բուլղարիա, Թուրքիա, Լիտվա, Լատվիա և Լեհաստան, քննարկելու երիտասարդական մասնակցության տեղական (ոչ թե տարածաշրջանային, այլ մարզային, ՏԻՄ մակարդակներում) խնդիրները, վերլուծելու երիտասարդական քաղաքանության և երիտասարդական աշխատանքի զարգացման հնարավորությունները:

Սեմինարի նպատակն էր համախմբելու ԵԱԳ երկրներից ներկայացուցիչներ՝ քննարկելու տեղական երիտասարդական քաղաքականության զարգացումները, համակառավարման կիրառումներն ու երիտասարդական քաղաքականության ապագայի տեսլականը տարածաշրջանում: Ծրագիրը նպատակ ունի հզորացնելու Համազգային երիտասարդական խորհուրդները (ՀԵԽ) և ՀԿ-ները, որպեսզի վերջիններս համագործակցեն և զարգացնեն տարածաշրջանում երիտասարդական հիմնախնդիրների վերաբերյալ ընդհանուր տեսլական, զարգացնելու գաղափարներ և հնարքներ այն մասին, թե ինչպես կարելի է առավել խորությամբ մշակել և կիրառել քաղաքացիական հասարակության մեջ երիտասարդների մասնակցության վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները:

կայացնելու պատիվը հասավ միայն ինձ...»

կանություն» թեմայով միջազգային դասընթացի մասնակից Տիգրան Պետրոսյանի հետ

Սեմինարը հանդիսացավ որպես նախապատրաստական փուլ 2013թ. հոկտեմբերին Լիտվայում կայանալիք ԵԱԳ ֆորումի համար, քանի որ սեմինարի արդյունքները համապատասխանում են համաժողովի բովանդակությանը, ինչպես նաև հզորացնում են համագործակցությունը քաղաքականություն մշակողների և երիտասարդական ներկայացուցիչների միջև ազգային մակարդակում: Տրամադրվելու է տարածք Լիտվայում հաջողված օրինակները կիսելու, տեղական երիտասարդական քաղաքականության իրականացումն ուսումնասիրելու և տեղական երիտասարդական աշխատանքին ծանոթանալու համար:

Ի՞նչ տվեց ծրագիրը Ձեզ :

Առաջին հերթին կնշեմ նոր մոտեցումները տեղական մակարդակներով երիտասարական հիմնախնդիրների լուծան և դրա կազմակերպման հարցերում, տեսական և գործնական գիտելիքներ, տեղեկատվություն մասնակից պետություններում ընթացող երիտ քաղաքականությունների և դրանց կյանքի կոչման ժամանակ առաջացող խնդիրների ու դրանց հաղթահարման աշխատանքներում, պետք է իհարկե նշեմ մեծ թվով ընկերներ, միջազգային համագործակցության մի շարք նախնական պայմանավորվածություններ, ստորագրած պայմանգիր Ուկրաինայի Երիտասարդական Ֆորումի և Կայտբորդինգի Զարգացման Կենտրոնի, ում նախագահն եմ հանդիսանում այժմ.

կցանկանայի նշել նաև այն դառնության և ափսոսանքի զգացման մի մեծ չափաբաժին, որն ինձ մնաց շնորհիվ մեր երիտասարդական կառույցների ցուցաբերած պասիվության, ինչը այլ պետությունների ներկայացուցիչների հիպերակտիվությունների ֆոնի վրա իհարկե չէր կարող չառաջանալ...

Հանդիսանալով Հայաստանից միակ մասնակիցը՝ ի՞նչ նոր բան բերեցիք Հայաստան :

Նշեմ որ Վիլնյուս քաղաքում Սոցիալական Հարցերով նախարարության Երիտասարդության վարչության պետի (երիտասարդության հարցերով զբաղվում է հենց այս կառույցը) հետ հանդիպման ժամանակ, երբ տարբեր երկրների ներկայացուցիչների բարձրացնում էին իրենց հուզով հարցերը, և ըստ էության համակարգված լոբբինգ անում իրենց երիտասարդական դաշտերի շահերը, իմ կողմից հնչեցվեց մինչ այժմ հայ և ոչ միայն հայ երիտասարդներին եվրոպական համագործակության դաշտում էական խոչընդոտ հանդիսացող վիզա արգելքների և տեխնիկական խոչընդոտների հարցը, հատկապես Լիտվայի ԵՄ նախագահող պետություն դառնալու կոնտեքստում և խնդրեցի իրենց ուշադրության կենտրոնում առնել նշված պրոբլեմատիկան. Նախարարությանը ներկայացուցիչը խոստացավ համապատասխան հարցում անել Լիտվայի ԱԳՆ և իրենց նախագահության տարիներին հետևողական լինել այս հարցին.

Ի՞նչ հետագա պլաններ ունեք ծրագրից հետո : Արդյո՞ք կրկին կմասնակցեք նմանատիպ ծրագրերի:

Նախ ցանկանում եմ մոտակա շաբաթում ստացված տեղեկատվության, փորձի, և կոնտակտների կիսման և բազմապատկման նպատակով հանդիպում կազակերպել տեղի երիտասարդական կառույցների և ակտիվ երիտասարդների հետ.

Կազմակերչպիչների փորձը, վերջիններիս կողից մեր անմիջական հարևան երկրներում իրականացրած հարցումները և դրանց հիման վրա տեղական մակարդակներով երիտասարդական քաղաքականությունների մշակման մեծածավալ ու նորարարական աշխատանքները, իհարկե հեռակա պլաններում առաջացնում են տեղում նմանատիպ վերլուծություններ, մշակումներ ունենանալու ցանկություն և պատրաստակամություն համատեղ տեղի կառույցների (հենց YIC-ի հետ) այն գործողությունների վերածելու.

ԵԿԾ ուղարկված կամավոր

Թամարան՝ Հունաստանում

“ELLA,” Բարև բոլորին: Ես Թամարան եմ և կատարում եմ Եվրոպական կամավորական ծառայություն Լեֆկադայում՝ Հունաստանի ամենագեղեցիկ կղզիներից մեկում:

Ծրագրի հիմական նպատակն է կամավորության տարածումը, և այդ իսկ պատճառով ես հիմնականում աշխատում եմ գրասենյակում: Ես թարմացնում եմ գովազդային թռուցիկները, ստեղծում պաստառներ, գրում հոդվածներ, պատրաստում շնորհանդեսներ, կազմակերպում դասընթացներ:

Լեֆկադան իսկապես հրաշալի վայր է՝ արևոտ ծովափերով և հրաշալի մարդկանցով: Սա մի վայր է, որտեղ ամեն ինչ ընթանում է “sigha sigha”՝ շատ դանդաղ. մարդիկ իսկապես վայելում իրենց ապրած կյանքի ամեն մի րոպեն: Մի զվարճալի բան, որ ես նկատել եմ այստեղի մարդկանց մեջ, դա այն է, որ նրանք ակումբներում նախընտրում են երգել պարելու փոխարեն:

Ընդամենը չորս ամիս է, ինչ ապրում եմ Լեֆկադայում,

բայց արդեն հասցրել եմ հանդիպել այնքան շատ հետաքրքիր մարդկանց և այցելել տարբեր գեղեցիկ ծովափեր և փոքրիկ հրապուրիչ քաղաքներ: Տասներկու կամավորներով ապրում ենք մեծ տան մեջ, որոնցից յուրաքանչյուրը հետաքրքիր և յուրօրինակ անհատականություններ են, և ես իսկապես վայելում եմ նրանց հետ անցկացրախ ժամանակս: Այս մարդիկ ինձ ոգեշնչում են անել այնպիսի բաներ, որ ես երբևէ չեմ արել իմ կյանքում՝ միգուցե դրա պատճառը տեղանքն է կամ ժամանակը, որ թույլ է տալիս ինձ փորձելու նորը:

Այս չորս ամիսների ընթացքում ես արդեն ունեցել եմ հրաշալի հնարավորություն ճամփորդելու հոնիական կղզիներում և ինձ համար բացահայտել դրախտային վայրեր: Ես կարողացա ապացուցել ինքս ինձ և իմ ընկերների համար, որ խոհանոցը և ես իրականում բավականին համատեղելի հասկացություններ են: Ես սովորել եմ լողալ, հեծանիվ վարել և ամենակարևորը՝ սովորել եմ թխել տորթեր: Ես գիտակցում եմ ժամանակի արժեքը և սկսել եմ իմ ժամանակը ավելի լավ դասավորել:

Չնայած որ ընդամենը չորս ամիս է, ինչ ժամանել եմ, բայց արդեն դժվար եմ պատկերացնում իմ հետագա կյանքը առանց այս փոքրիկ մանրուքների, որոնք դարձել են իմ առօրյա կյանքի անբաժանելի մասը:

ԵԿԾ-ն ինձ համար ոչ թե կամավորություն է Հայաստանից դուրս, այլ ցկյանս փորձ: Դա ժամանակահատված է, երբ բացահայտում ես շատ բաներ ինքդ քո մասին և տեսնում, թե ինչպես ես հասունանում և դառնում ավելի բաց, հանդուրժող և պատասխանատու մարդ: Եվ իհարկե, ես շատ ոգևորված եմ և երախտապարտ՝ ստանալու հնարավորություն նման փոքրիկ դրախտավայրում լինելու համար:

ԵԿԾ կամավոր Թամարա Խլղաթյան

Կոնտակտային տվյալներ

Հասցե: Ջիվանի , Գյումրի 3107, Հայաստան

Հեռ.: (+374) 312 6 94 97

Էլ-հասցե: newsletter@yic.am

Վեբ-կայք: www.yic.am